ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Առ 1 մարտի տարեւոյս Ճեմարանիս հանգուցեալ ուսուցիչ Վ. Աբովեանի որբերի անունով ստացուած նուէրների գումարն է ընդամէնն 1064 ռուբլի։ Մարտի ընթացքում նուիրեցին նոյն նպատակին. ա) օրիորդ Մարգարիտ Բաբայեան, Թիֆլիսից 10 ռուբլի. բ) Վրաստանի և Իմէրեթի թեմական առաջնորդ Գեր. Գէորգ արքեպիսկոպոսն ուղարկեց Ճեմարանի Վարչութեանը Թիֆլիս և Արդուին հանգանակուած գումար՝ 227 ռուբլի 77 կոպ. գ) Արժ. Եղիշէ քահանայ Դեղամեանը Բագուից ուղարկեց Ճեմարանի Վարչութեանը հանգուցեալ Աթամալեանի յուղարկաւորութեան պրոսաֆների փոխարէն Արշ. և Յար. Յակոբջանեանների և Մարտ. Սարգսեանցի նուիրած 80 ռուբլի. դ) Մովսէս Տէր Թովմասեան 3 ռուբլի. է) Միք. Սմբատեան Ագուլիսից 8 ռուբլի և զ) Վեհափառ Հայրապետի Դիւանից ստացուեցաւ Պ. Աբգար Յովհաննիսեանի շնորհիւ Թիֆլիսում հանգանակած գումար 300 ռուբլի. ընդամենն վեց հարիւր քսան և ութն ռուբլի 77 կոպէկ։ Այսպէս՝ առ 22 մարտի ստացուած բոլոր նուէրների ընդհանուր գումարն է 1712 ռուբլի 77 կոպ. այդ գումարից վճարուեցաւ այրի տիկին Ն. Աբովեանին նորա դստեր ուսման ծախս քառասուն ռուբլի. մնում է մի հազար վեց հարիւր եօթանասուն և երկու ռուբլի եօթանասուն և եօթն կոպէկ (1672 ռուբլի 77 կոպէկ)։

Հ. Եղիշէ քահանայ Դեղամեան մարտի 3-ի գրութեամբ ծանուցանում է, որ հանգուցեալ Աթամալեանցի այրի տիկին Աննա Աթամալեանց նուիրել է հինգ հարիւր ռուբլի հանգուցեալ Վ. Աբովեանի որբերի անունով և այդ գումարը կուղարկուի մի ամսից յետոյ։

Տեսուչ Ճեմարանի՝

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ.

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՍ ՏՊԱՐԱՆՈՒՄ

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ

ՀԵՏԵԻԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

	Ռ.	Կ.
1. Սրբազան պատմութիւն Հին Ուխտի, Ամբրոսիոս Վ. Գալֆայեանցի	1	—
2. Նոյն Նոր Ուխտի (պատկերազարդ)	—	50
3. Կրօնական բարոյական խորհրդածութիւններ Ա. Գիրք	—	20
4. Նոյնը Բ. Գիրք . . .	—	20
5. Նոյնը Գ. Գիրք . . .	—	20
6. Նոյնը Դ. Գիրք . . .	—	20
7. Նոյնը Ե. Գիրք . . .	—	20
8. Նոյնը Զ. Գիրք . . .	—	20
9. Նոյնը Է. Գիրք . . .	—	20
10. Նոյնը Ը. Գիրք . . .	—	20
11. Նոյնը Թ. Գիրք . . .	—	20
12. Նոյնը Ժ. Գիրք . . .	—	20

Գումարով գնողներին 20% զիջումով.

Մամուլի տակ են ա) Հայաստանեայց եկեղեցւոյ ս. Կարգ, Արշ. Տէր-Միքելեանի.

բ) Տէր-Պետրոս Ա. Գետադարձ. գրեց Կ. Կոստանեանց։